Անձնական համար՝_____ ԱԱՀ՝_____

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ - 2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
Տևողությունը՝ 90 րոպե

• Միրելի՛ աշակերտ, ուշադիր կարդա՛ տեքստը:

1

Մի որբ երեխա՝ ցնցոտիներ հագած, կուչ էր եկել պատի տակ: Գարնան անուշ արևը բարի աչքերով նայում էր նրան: «Կարմի՛ր արև, բարի՛ արև, դու ես միայն ինձ տաքացնում,- մտածում էր խեղճ մանուկը,- դու ես միայն ինձ զգվում, համբուրում, ինչպես անգին մայրս: Թե չէ մարդիկ աչք չեն դարձնում վրաս»:

Բայց կամաց-կամաց արևը թեքվում էր կանաչ սարերի հետևը: Երեխան կարոտով ու արցունքով նայում էր նրան, մինչև որ ոսկեհեր արևը սահեց ու անցավ սարի այն կողմը:

-Չէ՛, ես չեմ կարող առանց արևի,- վճռեց մանուկը,- ես պիտի երթամ արևի մոտ. ես գիտեմ ճամփան, ա՛յ, այս սարի հետևը:

Վճռեց ու ճամփա ընկավ:

2

Մութն իջնում էր, և կանաչ սարը սևով էր ծածկվում: Ճանապարհին մարդիկ էին հանդիպում և հեռվից ձայն տալիս.

-Է՛յ, է՛յ, ո՞վ ես դու:

-Ճամփորդ տղա եմ,- պատասխանում էր երեխան:

-Ո՞ւր ես գնում:

-Արևի մոտ, ա՛յ այս սարի հետևը:

-Հիմա՛ր տղա,- ասում էին նրանք ու հեռանում:

Բայց երեխան ուշք չէր դարձնում: Նա պարզ զգում էր, որ արևը այս սարի մյուս երեսին է. մի քիչ էլ, մի քիչ էլ, ու կլինի արևի մոտ: Ու անվախ, վստահ քայլերով գնում էր վերև, բարձր, միշտ բարձր:

3

Բավական ուշ էր արդեն, երբ լսեց շների հաչոց ու տեսավ՝ շատ մոտիկ մի կրակ է շողշողում:

-Ո՞վ ես,- լսեց խավարի միջից մի ձայն,-ո՞ւր ես գնում:

-Անտեր, ճամփորդ տղա եմ. գնում եմ արևի մոտ: Ասա՛, ո՞րն է արևի ճամփան. մութ է, էլ սարերը չեմ տեսնում:

Ճրագը ձեռքին՝ երեխային մոտեցավ մի մարդ: Նայեց նրան, նայեց ու ասաց քնքուշ ձայնով.

-Դու հոգնած կլինես ու քաղցած, գնանք ինձ մոտ:

Բարի անծանոթը բռնեց երեխայի ձեռքը և տարավ տուն:

4

Նրա տունը մի հասարակ խրճիթ էր, մեջտեղում վառվում էր օջախը, որի շուրջը նստել էին բարի մարդու կինը և երեք փոքրիկները, որոնք համարյա հասակակից էին ճամփորդ երեխային: Խրճիթին կից մի սրահում որոճում էին ոչխարները: Նա հովիվ էր, սարի հովիվ:

-Միրելի՛ երեխաներ, ձեզ եղբայր եմ բերել: Երեքին հաց տվող ձեռքը չորսին էլ կտա: Սիրեցե՛ք սրան. համբուրեցե՛ք ձեր նոր եղբորը:

Ամենից առաջ հովվի կինը մոտ եկավ, գրկեց երեխային և մոր պես ջերմ-ջերմ համբուրեց: Հետո երեխաները եկան և եղբոր պես համբուրեցին նրան: Երեխան իր սրտում մի քաղցր տաքություն զգաց, և նրան այնպես թվաց, թե արևը հենց ուղիղ խրճիթի վերևում է վառվում...

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝_____

Ուրախությունից լաց եղավ, անուշ-անուշ լաց եղավ և պատմեց իր գլխին եկածները: Հետո օջախի առջև սեղան նստեցին, կերան, խմեցին, ծիծաղեցին: Մայրը նրանց համար անկողին գցեց և ամենքին քնեցրեց իր կողքին:

Երեխան շատ էր հոգնած. տեղը մտավ թե չէ, իսկույն աչքերը խփեց ու քնեց...
Երազի մեջ նա ժպտում էր ուրախ: Իբրև թե ինքն արևի մոտ է, գրկել է նրան ամուր ու պառկել նրա գրկում՝ տաք ու երջանիկ...

Մեկ էլ սրտի ուրախությունից վեր թռավ. զարթնեց ու տեսավ, որ արևի փոխարեն իր նոր մոր գրկում էր: Եվ նրան թվաց, որ արևը ոչ թե այս խրճիթի վրա է, այլ այս խրճիթի մեջ, որ ինքն ուղիղ արևի գրկում է...

- **Կատարի՛ր առաջադրանքները:**

1. ***Անգին (_____) մայրս*** բառակապակցության մեջ ***անգին*** բառը փոխարինի՛ր փակագծերում տրված հոմանիշներից մեկով այնպես, որ բառակապակցության իմաստը պահպանվի: **1 մ**

(անվճար, մեծարժեք, անվարձ, թանկագին, էժան, թանկարժեք)

2. «Նրա տունը մի հասարակ խրճիթ էր…» նախադասության *խրճիթ* բառի համար մեկ հոմանի՛շ գրիր: 1 մ.

_____

3.Դո՛ւրս գրիր 3 բառ, որոնցով բնութագրված է տղան: 3 մ.

_____ _____ _____

4. Տեքստից դո՛ւրս գրիր *արևը* բնութագրող 1 բառ: 1 մ.

_____

5. Դո՛ւրս գրիր 1 բառ, որը մատնանշում է, թե երեխան ինչպես էր նայում հեռացող արևի հետևից: 1 մ.

6. Տեքստում գտի՛ր և դո՛ւր գրիր *ծնողազուրկ, ոսկեմազ* բառերի հոմանիշները: 2 մ.

7. *Մութն իջնել* և *ձայն տալ* արտահայտություններից յուրաքանչյուրի իմաստն արտահայտի՛ր մեկ բառով: 2 մ.

_____ _____

8. Գտի՛ր ու դո՛ւրս գրիր այն տողը, որը ցույց է տալիս, թե տղան ինչպես էր գնում դեպի արևը: 1 մ.

_____

_____

9. Ընտրի՛ր հարցի ճիշտ պատասխանը, թե ճանապարհին հանդիպած մարդիկ տղային ինչու էին *հիմար* անվանում 1 մ

1. Ճանապարհին հիմարություններով էր զբաղված:
2. Ասում էր, որ պիտի բռնի ու իր մոտ պահի արևը:
3. Որոշել էր գնալ արևի մոտ:
4. Արևի մասին հիմար բաներ էր ասում:

10. Տղայի կարծիքով՝ ինչպիսի՞ն էր արևի վերաբերմունքն իր նկատմամբ: Դո՛ւրս գրիր համապատասխան տողը: 1 մ.

_____

_____

11. Տղան ինչո՞ւ լաց եղավ: Ընտրի՛ր 2 ճիշտ պատասխանները: 2 մ.

1. Հովվի կինը նրան մոր պես ջերմ ընդունեց:
2. Տղան չգտավ արևի մոտ տանող ճանապարհը:
3. Հովվի երեխաները եղբոր նման ընդունեցին տղային:
4. Տղան իր մայրիկին էր գտել:

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝_____

12. Տղան երազում ի՞նչ էր տեսնում: Ընտրի՛ր 2 ճիշտ պատասխանները: 2 մ.

1.Ինքը երջանիկ է արևի տաք գրկում:
2.Ինքն արևին չի հասնում:
4. Արևը դեռ շատ հեռու էր:
5. Ինքն իր մայրիկի գրկում էր:
6. Ինքն արևի մոտ է:
7.Արևը փախչում էր իրենից:

13. Տղան *«Մեկ էլ սրտի ուրախությունից վեր թռավ. զարթնեց ու տեսավ, որ…»:* Ընտրի՛ր ճիշտ պատասխանը: 1 մ.

1. Չի գտել արևն ու հոգնած քնել է սառն ու խոնավ գետնին:
2. Արևի փոխարեն իր նոր մոր գրկում էր:
3. Ինքն իր մոր փոխարեն արևի գրկում է:
4. Արևը ներս է ընկել լուսամուտից ու ջերմացրել է խրճիթը:

14. Մանուկն ինչո՞ւ չէր կարողանում առանց արևի: Իսկ դու կարո՞ղ ես: Պատասխանդ հիմնավորի՛ր 2-3 նախադասությամբ: 5 մ.

_____
_____
_____

15. 2-3 նախադասությամբ մեկնաբանի՛ր հետևյալ տողերի իմաստը. *«Երեխան իր սրտում մի քաղցր տաքություն զգաց, և նրան այնպես թվաց, թե արևը հենց ուղիղ խրճիթի վերևում է վառվում...»:* 5 մ.

_____
_____
_____

16. Օգտվելով տեքստի նկարագրությունից՝ քո բառերով 2-3 նախադասությամբ նկարագրի՛ր հովվի խրճիթը: 5 մ.

_____
_____
_____

17. 2-3 նախադասությամբ մեկնաբանի՛ր նշված տողերի իմաստը. *«Եվ նրան թվաց, որ արևը ոչ թե այս խրճիթի վրա է, այլ այս խրճիթի մեջ, որ ինքն ուղիղ արևի գրկում է...»:* 5 մ.

_____
_____
_____

18. 2-3 նախադասությամբ նկարագրի՛ր, թե ինչ էիր զգում պատմությունը կարդալիս և ինչու: 5 մ.

_____
_____
_____

19. 2-3 նախադասությամբ բնութագրի՛ր հովվին ու նրա ընտանիքը: Ըստ քեզ՝ ինչպիսի մարդիկ էին նրանք: 5 մ.

_____
_____
_____

20. Տեքստի համար դիպուկ վերնագի՛ր ընտրիր: 1 մ.

_____

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան